ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, Երևան 0010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ 010 54 03 26, ֆաքս՝ 010 54 06 13
Էլ.փոստ՝ scws@scws.am
Վեբ կայք՝ scws.am

« __» _____ 2024թ.

N 03/17/6196-2024

«ՀՈՒՍԱԼԻ ԿԱՄԱՐ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ
(ք. Երևան, Կիևյան 12շ. 50 բն.
հեռ. 094019955
էլ. հասցե husali-kamar@mail.ru)

Ծանուցում
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Առաքելյան

Ջրային կոմիտեի և «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի միջև 2022 թվականի ապրիլի 07-ին կնքվել է ՋԿ-ԳՀԾՁԲ-22/5-Տ գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) (15.02.2024թ. կնքված Համաձայնագիր N4), որի շրջանակում Ընկերությունը պետք է կատարեր գետերի ափերի պաշտպանության շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ - Գետիկ գետի հունի մաքրում շուրջ 1600 մ և ափերի ամրացում շուրջ 150 մ Ճամբարակ խոշորացված համայնքի Մարտունի գյուղի տարածքում: Պայմանագրով նախատեսված ծառայությունները սույն թվականի սեպտեմբերի 17-ի դրությամբ չեն կատարվել:

Նշված աշխատանքները Կապալառու կազմակերպության կողմից չեն կատարվել և «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն չի իրականացրել Պայմանագրով սահմանված գործառույթները (Անավարտ աշխատանքների և զգալի թերությունների հայտնաբերման դեպքում կազմել նրանց ցանկը, սահմանել վերացման ժամկետները և անհապաղ գրավոր տեղյակ պահել Պատվիրատուին...):

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը, Ջրային կոմիտեն 2024 թվականի դեկտեմբերի 13-ին միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 3 000 ՀՀ դրամ՝

Կատարող՝ Ա. Սարգսյան
գնումների վարչություն
Հեռ.՝ 010 540229

որպես տուգանք (Պայմանագրի 5.2 կետի համաձայն) և 12 540 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 5.3 կետի համաձայն), ինչպես նաև Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ենթակա է գանձման պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 60 000 ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը՝ 90 000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Ելնելով վերոգրյալից տեղեկացնում ենք սահմանված ժամկետում, այն է սույն թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ՝ վերը նշված աշխատանքների կատարման համար պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման գումարները վճարվելու դեպքում Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման կանխիկ վճարված գումարները գանձապետական նշված հաշվեհամարին փոխանցելու նպատակով Ջրային կոմիտեն կդիմի ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը Կենտրոնական գանձապետարանում լիազոր մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվեհամարին վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը անհրաժեշտ է ներկայացնել Ջրային կոմիտե:

Նշված գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում Ջրային կոմիտեն կձեռնարկի միջոցներ դրանք գանձելու ուղղությամբ:

Recoverable Signature

X

ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Signed by: GHAZARYAN ARTAK 1403750092

Հարգանքով՝ ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ